

**ԵԱՀԿ գործող նախագահը դատապարտում է ուժի կիրառումը
Հայաստանում, կրկին կոչ է անում հետ-ընտրական երկխոսության**

ՀԵԼՍԻՆԿԻ, մարտի 1, 2008թ.: ԵԱՀԿ Գործող Նախագահ, Ֆինլանդիայի արտգործնախարար Իլկա Կաներվան դատապարտել է խաղաղ ցուցարարների հանդեպ ուժի կիրառումը այսօր Երևանում:

«Ես հորդորում եմ իշխանություններին ցուցաբերել մաքսիմալ զսպվածություն: Ես անհանգստացած եմ այն փաստով, որ տեղեկությունների համաձայն կան վիրավորներ: Հորդորում եմ իշխանություններին ազատ արձակել ձեռքակալվածներին և կրկին երկխոսության կոչ եմ անում իշխանություններին և ընդդիմությանը», ասաց նախարարը:

Երևանում փետրվարի 26-ին հայկական պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումների ժամանակ նախարարը նշել էր, որ ԵԱՀԿ-ն պատրաստ է շարունակելու աջակցել Հայաստանին ժողովրդավարության ամրապնդման և ԵԱՀԿ և այլ դիտորդների կողմից ս.թ. փետրվարի 19-ին Հայաստանում անցկացված նախագահական ընտրությունների ընթացքում արձանագրված թերությունների շտկման հարցերում:

«ԵԱՀԿ-ն կարևորում է երկխոսության դերը կայունության համար: Հայաստանի զարգացման համար այս կարևոր ժամանակաշրջանում պետք է անել ամեն ինչ առկա լարվածության սրումից խուսափելու համար», ասաց նախարար Կաներվան, որն այս շաբաթ այցելել է նաև Ադրբեջան և Վրաստան իր Հարավային Կովկաս կատարած այցի շրջանակներում: